

Հարգելի գործընկերներ, հյուրեր, հարգելի մասնակիցներ, տիկնայք և պարոնայք, թույլ տվեք Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և նախարարի անունից ողջունել Ջարկերակային գերճնշման Հայ-Ռուսական գիտաժողովի մասնակիցներին:

Բոլորիս քաջ հայտնի է, որ աշխարհի առողջապահական համակարգերի առջև նոր մարտահրավեր է ծառայել՝ ի դեմս ոչ վարակիչ հիվանդությունների: Առողջապահության համաշխարհային կազմակերպության վիճակագրության համաձայն՝ աշխարհում բնակչության հիվանդացության և մահացության հիմնական պատճառը ոչ վարակիչ հիվանդություններն են՝ արյան շրջանառության համակարգի հիվանդությունները, չարորակ նորագոյացությունները, շաքարային դիաբետը: Առավել մտահոգիչ է, որ այս հիվանդությունները տարեցտարի երիտասարդանում են: Պատահական չէ, որ Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը խրախուսում է այս մարտահրավերի հաղթահարմանն ուղղված լայնածավալ պայքարը:

Հայաստանում արձանագրվող յուրաքանչյուր երկրորդ մահը պայմանավորված է սրտանոթային հիվանդություններով: Հետևաբար հանրային առողջապահական այս խնդրի լուծումը նախարարության գերակա նպատակներից մեկն է:

Ինչպես գիտեք, աշխարհն այսօր գնում է բնակչությանն առողջ պահելու ճանապարհով: Սրտանոթային հիվանդությունների ռիսկի գործոններից զարկերակային գերճնշումը (հիպերտենզիան) պետք է լինի ոչ միայն սրտաբանների, այլև մյուս բոլոր մասնագետների ուշադրության կենտրոնում: Նման քննարկումները կարող են նպաստել մասնագետների գիտելիքների զարգացմանը: Արդյունքում կշահի մեր բնակչությունը և նրա առողջությունը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն, ի դեմս առողջապահության նախարարության, վերջին տարիներին սրտանոթային հիվանդությունների կանխարգելման և վաղաժամ մահացության նվազեցմանն ուղղված տարբեր ծրագրեր է իրականացնում: Առողջության պահպանման առաջնային օղակում բնակչությունն անվճար օգտվում է սրտաբանական ծառայություններից, իսկ նրա մի ստվար մասը՝ նաև հիվանդանոցային ծառայություններից, այդ թվում՝ երկրի նախագահի ծրագրային դրույթներից բխող՝ սրտի անհետաձգելի վիրահատության ծրագրից:

Միաժամանակ 2014 թվականից Հայաստանում մեկնարկել է ոչ վարակիչ, այդ թվում՝ սրտանոթային հիվանդությունների վաղ հայտնաբերման սկրինինգային ծրագիր, որի շրջանակում երեք տարվա ընթացքում պետք է հետազոտվի թիրախային բնակչության 50 տոկոսը:

Այս ենթատեքստում չափազանց կարևորվում է նաև առողջ ապրելակերպի խթանումը, ինչը մեր երկրում իրականացվում է կառավարության կողմից հաստատված ռազմավարական ծրագրով:

Հարգելի գործընկերներ, գիտաժողովի օրակարգում ընդգրկված թեմաների արդիականությունը հնքնին հուշում է, որ դրանց քննարկումները, ինչպես նաև միմյանց փորձի փոխանակումը կնպաստեն ոլորտի առջև ծառայած խնդիրների դիմակայմանը:

Ողջունելով գիտաժողովի մասնակիցներին, կազմակերպիչներին ինչպես նաև աջակիցներին՝ մաղթում եմ արդյունավետ աշխատանք:

ԼԵՎՈՆ ԱԼԹՈՒՆՅԱՆ

ՀՀ առողջապահության նախարար